

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ — ԲԵՄԱԿԱՆՔ

● Եր. 3 Յուն. — Ս. Արգառու քաղ. մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Բարսեղ Աբեղայ:

● Կիր. 4 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուիթիւն, մեր վերնամարտն մէջ. Ժամարարն էր Հոգչ. Տ. Արփիար Աբղ. Տէմիրհան: Ս. Թարգմանչաց Վարժարանի աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն:

— Կէսորէ ետք, Դաւիթ մարգարէի և Յակոբոս Տեառնեղբոր նախատեսակը բացաւ Ս. Ծննդեան պահէր կանխող եօթնեակը Աւագ Տօնուն: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց արարողութեանը և թափօրով բարձրացաւ Պատրիարքարան: Վերաշափառի կողքը զանց առնուեցաւ աննպատու օդի պատճառաւ:

● Բշ. 5 Յուն. — Գաւթի մարգարէի և Յակոբայ Տեառնեղբոր (Տօն Առաքելական Ս. Արտոյն Շուռաղի): Ս. Աթոռոյ տօնը կատարուեցաւ աւանդական շքեղութեամբ: Բառք ի բարձունսի առնել Ամեն. Ս. Պատրիարք Հայրը զգեստաւորեալ բարձրացաւ Տեառնեղբոր Աթոռի պատուաւորակին, ուր ապա ընդունեց Միաբանութեան շնորհաւարութիւնները: Աւագ Սեղանից վրայ կանդիօնաւր Ս. Պատարագը մատուց և տօնելի զոյգ սուրբերու մասին քարոզեց Գերշ. Տ. Կիրեղ Եպ.: Իսկ Գերշ.

Տ. Եանէ Աբեղայ. նախագահեց հանդուհեալ պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին:

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Ս. Ստեփանոսի նախատեսակին: Բարձրաւ. Կիր Հայրերն էին Հոգչ. Տ. Անդեան Վրգ. և Հոգչ. Տ. Արփիար Աբեղայ:

● Գշ. 6 Յուն. — Ս. Սեփանոսի ճախովկայից: Բառք ի բարձունսի առնել և մինչև աւարտուած ժամերգութեան, Ս. Աթոռոյ 3 Սարկապանները և Նոյն թիւով Ռարարկիւնները, առաջնորդութեամբ բարձրաւոր զոյգ Հայրերուն, պանծացուցին յիշատակը իրենց մատակարարին: Ներկայ էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Սուրբ Ստեփանոս մատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռէկի Աբեղայ:

— Երեկոյեան, Ժառանգաւորացի սեղանաւ մէջ կատարուեցաւ աւանդական ընթրիքը, որուն աւարտին Սրբազան Պատրիարքը հանդէս եկաւ յարգարական խօսքերով: Նոյնըքաւ էր նախագէտ Վարժարանի ուսուցիչներէն Հոգչ. Տ. Անուշաւան Վրգ.:

● Գշ. 7 Յուն. — Գլխաւոր առաքելաց նախատեսակին նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպիսկոպոս:

● Եշ. 8 Յուն. — Պետրոսի և Պօղոսի առաքելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերին մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Անուշաւան Վրգ.:

● Ուր. 9 Յուն. — Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը վերաշափառուով մուտք գործեց Մայր Տաճար և նախատեսակին նախագահելէ ետք թափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

գին շնորհակալութիւններս կը յայտնեմ այս գեղեցիկ առաքումին համար: Շատ ուրախութեամբ պիտի ուզէի շարունակաբար ստանալ ձեր օգտաշատ հանդէսը:

Ձեր Համագումարին մէջ արծարծուած նիւթերը խիստ օգտակար են ո՛չ միայն եկեղեցականներուն, այլեւ ամէն հայու համար: Ամենապատիւ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրութիւնի և Ամենապատիւ Տ. Շնորհք Պատրիարքի գեկոյցները միայն չեն ՍԻՈՆԻ սահմանափակ շրջանակին մէջ, այլ դառնալու են ամեն հայու մատչելի՝ Սփիւռքահայ մամուլին միջոցաւ:

Խիստ գնահատելի եւ սրտի մօտիկ են Համագումարին եղած առաջարկները՝ Լեզուական կանոն մը ստեղծելու եւ կեդրոնական թերթ մը հրատարակելու մասին:

Ամենապատիւ Տ. Եղիշէ Պատրիարքը արժանի է խորին շնորհակալութեան եւ շնորհաւորութեան, Համագումարի գաղափարը յղացած ըլլալուն համար: Նոյնպէս շնորհաւորելի է Գերշ. Տ. Եանէ Աբեղայիսկոպոսը, այդքան յաջող կերպով կազմակերպելուն համար այս անդրանիկ Համագումարը: Անտարակոյս, նման Համագումարներ կրնան խիստ օգտակար ըլլալ ոչ միայն մասնակցող եկեղեցականներուն, այլեւ բոլոր հայերուն:

Մեր եղբայրական ողջոյնները Քրիստոսով Ամենապատիւ Տ. Եղիշէ Պատրիարքին, իր գործակիցներուն, ՍԻՈՆԻ խմբագրական կազմին:

Ջերմագին բարեւներով ի Քրիստոս՝
(Վեր.) ԾԱՐՈՒԹԻՒՆ ՀԷԼՎԱՃՅԱՆ

● Եր. 10 Յուն. — Տօճ Ս. Որդւոցն Ռոսոման: Զերեդեան եղբայրներու յիշատակի տօնը կատարուեցաւ աւանդական շուքով: Գերը. Տ. Շահէ Արքայո. հանդիտել պատարագեց Սուրբ Գրիգորի մատարան մէջ և շարողեց շարժական սեղանին առջևէն տօնելի զոյգ սուրբերու ստեղծել: Ս. Գատարագէն ետք, Գերը. Սըրբազանը, Կենաց Փայտի մասունքն ի ձեռին և մայրուհիին ներքև, նախագահեց մեծահանգէս թափօրին: Ապա Միարանութիւնը թափօրով բարձրացաւ Գատարագարան, ուր Գերը. Սըրբազանը օրհնուած նշար բաժնեց բալթին և փակեց շարքը Աւագ Տօնեղուն:

● Կիր. 11 Յուն. — Բարեկենդան Ս. Եննիգեան պանոց: Ս. Գատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առուածածնայ խորանին լիբոյ: Ժամատարն էր Հոգը. Տ. Ռաբէն Վրդ.:

● Դշ. 14 Յուն. — Նոր Գար (րոս չին Տոմարի): Կէս գիշերին, Մայրավանքի մեծ զանգը զբարթ փանդիւններով կը ձայնակցէր Ս. Յառութեան Տաճարի Յունաց զանգերուն, աւետելու Նոր Տարին: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ պատարագեց, ըստ սովորութեան, վերջերս նոր նշանակուած ժամօրհնողը՝ Հոգը. Տ. Անշուշան Վրդ. Զղշանեան, որ շարողեց պարտքի գիտակցութեան մասին: Սոյն քաղաքի կ'երևի Սիոնի ներկայ թիւին մէջ:

— Ի Ս. Հրեշտակապետ մատուցուեցաւ, ըստ սովորութեան, Տեսական Գատարագ, որու աւարտին տեղացի Հայեր Տեսականին մէջ իրենց շնորհաւորութիւնները մատուցին Հոգը. Տ. Սևան Վրդ. Զարիպեանի, որ Վէր, Կեցոյ մաղթեցէն և պատուասիրուած էր ետք, ըրաւ պատշաճ շնորհաւորական խօսքեր և ըստինքն բալթին տարին և Սուրբ Աթոռայ Օրացոյց:

● Եր. 17 Յուն. — Ս. Բարսիկ Խայրապետին: Ս. Գատարագը մատուցուեցաւ Ի Ս. Գրիգորի ժամատարն էր Հոգը. Տ. Սևան Վրդ.:

● Կիր. 18 Յուն. — Ճրագլոյց Ս. Եննիգեան: Քրիստոնէական եկեղեցւոյ երկրորդ մեծագոյն տօնը և անշարժ տօնեղուն մեծագոյնը այս տարի եւ կատարուեցաւ պատշաճ հանդիսաւորութեամբ: Հապառակ փոխթողոս և խիտեցուտ օգին, մեծ բազմութիւն էր լեցուցած Ս. Ս. Եննիգեան երապարակը, երբ ժամը 10ին երուսաղէմէն ճամբայ ելած Ամեն. Ս. Գատարագը Հայրը, Իր շքամուծքով և ինքնաշարժերու պատկանելի թափօրով կը հասնէր Բեթղեհէմ ժամը 11.15ին, կարճ պահ մը կանգ առնելէ ետք ճամբու կէտին, Յունաց Ս. Սիդի վանքին դռներ, Հ. Մ. Ը. Մ. և Հ. Ե. Մ. Արիւնքն ու Արեւոյշնորը, իրենց փողերախումբերով, կ'աւելցնէն փայլը հանդիսութեան: Ինքնաշարժէ էլքին՝ Ն. Ամեն. կը դիմաւորին Բեթղեհէմի Քաղաքապետին և Զին. Կառավարչին կողմէ: Անմիջապէս կը կազմուի եկեղեցական թափօրը, որ խորհուրդ մեծը երգելով կը յառաջանայ գէպի Ս. Եննիգեան

Տաճարը Մեր Տեսչարանին մէջ կը կատարուի պատուասիրութիւն:

— Կէսօրէ ետք, Գերը. Տ. Կիրեղ Եպո. Գարեկեանի գլխաւորութեամբ, Միարան Հայրեր Ներաշափառուով մուտք գործեցին Ս. Եննիգեան Տաճար: Ս. Այրի ուխտէն ետք, Ճրագլոյցի և յարակից պաշտամունքները կատարուեցան Տաճարի մեր բաժնին մէջ: Ս. Գատարագը մատուցուեցաւ Ս. Այրին մէջ: Ժամատարն էր Հոգը. Տ. Բարսիկ Աբեղայ: Նախատեսակէն ետք, Միարանութիւնը թափօրով բարձրացաւ մեր վանքի սեղանատունը՝ ընթերցի:

— Գիշերան ժամը 10.30ին, Տաճարի մեր բաժնին մէջ ընթացք կ'առնեն գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները:

● Բշ. 19 Յուն. — Եննիգեան եւ ԱՍՈՒԱԵՍԱՅԱՏՈՒԹԻՒՆ: Կէս գիշերին, խորհրդաւոր զանգարանէն մը ետք, Միարանութիւնը աւաբող կ'իջնէ Ս. Եննիգեան Այրը, ուր կատարուած արարողութիւնները ձայնափառուեցան իւրայեղեան ռատիօկայանէն: Այդ միջոցին, Ամեն. Ս. Գատարագը Հայրը տուաւ իր պատգամը, որ կ'երևի Սիոնի այս թիւին մէջ: Սոյն արարողութեան ներկայ եղան երուսաղէմի Քաղաքապետ Վեհմ. Թէոփ Քոչլէք, Բեթղեհէմի Քաղաքապետ Վեհմ. Իլիաս Տըլէչ, Բեթղեհէմի Զին. Կառավարիչը և այլ տիկնաւոր գեմքեր, որոնք ապա շնորհաւորեցին նորին Ամենապատուութիւնը և մեկնեցան: Ս. Գատարագը եւ վերագործաւ Երուսաղէմ, մինչ Գերը. Տ. Կիրեղ Եպո. Նախագահին հանդիսութեան և, Տաճարի մեր բաժնին մէջ Հոգը. Տ. Ռաբէ Աբեղայէ մատուցուած Ս. Գատարագէն և կատարուած Ջրօրհնեաց արարողութիւնէն ետք, մատուց հանդիսաւոր Ս. Գատարագ Ս. Եննիգեան Այրին մէջ, որմէ ետք Միարանութիւնը թափօրով բարձրացաւ մեր վանքի սեղանատունը՝ նախաճաշի:

— Միարանութիւնը քիչ ետք ճամբայ ելաւ գէպի երուսաղէմ, ուր հասաւ ժամը 8ին:

● Երուսաղէմի մէջ, Կիրակի կէսօրէ ետք, Ճրագլոյցի արարողութիւն կատարուեցաւ Ի Ս. Յառութիւն: Ս. Գատարագը մատուցուեցաւ Ս. Գերեղմանին լիբոյ: Ժամատարն էր Հոգը. Տ. Արփիար Աբը. Տէմիրճեան: Նախատեսակին նախագահեց Տաճարին Տեսուչը՝ Հոգը. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան: Արարողութիւնները վերջ գտան մեր Տեսչարանին մէջ:

— Երկուշաբթի, կանոնի առաւօտուն, Ս. Յանդերանց Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. Գատարագ: Ժամատարն էր, ըստ սովորութեան, Ս. Հրեշտակապետեց Վանուց Տեսուչը՝ Հոգը. Տ. Սևան Վրդ. Զարիպեան, որ ապա նախագահեց Ջրօրհնէքի որոտգրաւ կարգին: — Երեկոսան նման, տեղացի դպիրները վարեցին երգեցողութիւնները:

— Նախատեսակին Ի Ս. Յակոբ Նախագահեց Գերը. Տ. Կիրեղ Եպո.:

